ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային հավասարության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության վարչապետի ամենամյա մրցանակների շնորհման մասին

1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գենդերային հիմնահարցերի լուծմանն աջակցելու և համայնքային մակարդակում որոշումների ընդունման հարցում կանանց դերը բարձրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետը սահմանել է <<Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> մրցանակ:
2. Մրցանակի հիմնական տեսակը <<Լավագույն քաղաքային համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> և <<Լավագույն գյուղական համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> անվանակարգերով:
3. Մրցանակաբաշխությանը մասնակցելու համար հայտերը և նախորդ տարվա ընթացքում համայնքային ծրագրերում գենդերային ուղղվածություն ունեցող միջոցառումների ցանկը ներկայացնել մինչև 2014 թվականի մարտի 15-ը ՀՀ Արարատի մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովին/ Արարատի մարզպետարան N 503 սենյակ, հեռ. /0235//2-53-93/: